ի խորշակէն։ Եւ մինչ ի հասարակել գիշերոյն մերձ ի Թէքիրտաղ հասանէաք, հանգիստ արարեալ անդ։ Եւ առաւօտի երկրորդ ժամուն ելաք ի քաղաքն եւ կացաք մեծաւ պատվով ի Շաբաթ և ի Կիրակէ, որ բարեկենդան Սուրբ Աստուածածնի (5 Օքտ.)։ Յետ սրբոյ պատարագին բերել ետուն վարդապետքն զսուրբ խաչն, որ կայ ի նմա բևեռ խաչափայտին Քրիստոսի տախտակին, և երկրպագեցաք մեծաւ յուսով։ Եւ հայեցեալ լինէաք մեծ վարդապետին և ոչ եկն, և ելեալ ուխտաւորքն գնացին։ Ելանէաք և մեք անտի Գշի (7 Օքտ.) մերձ ի հասարակել աւուրն և հասանէաք յԱրակլիայ երեկոյին։ Եւ ընդդէմ գոլոյ վօռէաս հողմոյն, մնայաք անդէն զաւուրս Գ, և Զշի (10 Օքտ.) գայաք երեկոյին ի Պղատոս կոչեցեալ գիւղն, որ յառաջ քան զՍիլիվրին կայ, վասնզի Բ անգամ ելաք յԱրակլիոյ և մի անգամ ի Պղատոսէ և յոյժ տագնապէաք ի յետս դարձուցանելն հողմոյն, և ոմանք ի մէնջ լային և ապա մեղմանայր օգնականութեամբ Սուրբ Կուսի Աստուածածնի, զի ի Պղատոսէ կալաք զայր ոմն յոյն նաւավար հմուտ, որ եկեալ նստաւ ի խելս նաւին ի ձեռին ունելով զղեկ, և ի Շաբաթի երեկոյին (11 Օքտ.) ապա և հասաք ի Բիւզանդ, հասեալ մեծահանդէս տօնի Փոխման Սուրբ Աստուածածնի՝ մեծաւ հրճուանօք։

Իսկ յելս Օգոստոսի լու լինէր թէ արեգակն խաւարէր յառաւօտէ ցվեցերորդ ժամ աւուրն՝ տեսեալ ի քաղաքն Անդրիանէ։ Այլ և ի պատերազմին՝ թէ ի Մաճար բաղում զօրք Տաճկաց անկան զօրագլխօք և չօրպաճովք։ Եւ յետ Ը աւուր եկն պատգամ եթէ առաւ մեծ բերդն Մաճարի ի ձեռացն Տաճկաց, որում անունն Վարատ ասի, վասն որոյ և մարդ յըղեալ աստ առ զայմախաճն առնել տօնանմա. որ և արարին իսկ